ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ ԱԱՊ ՕՂԱԿԻ ՀԱՄԱՐ

ԵՄ ֆինանսական օգնությամբ ԱՀԿ-ն աջակցում է ՀՀ Առողջապահության նախարարությանը՝ ամրապնդել և իկորացնել ԱԱՊ օղակը և վարակիչ հիվանդությունների կառավարմանն ու բուժմանն ուղղված ուղեցույցները ներկայացնել ԱԱՊ օղակի բժիշկներին:

Ներկայումս վերապատրաստման դասընթացների միջոցով թերապևտները, ընտանեկան բժիշկները և մանկաբույժները ծանոթանում են ուղեցույցներին:

«Ապացուցողական բժշկության տվյալների և ԱՀԿ-ի առաջարկությունների հիման վրա մենք կարողացանք մշակել բավականին համապարփակ և հակիրճ ուղեցույցներ: Վարակիչ հիվանդությունների կառավարմանն ու բուժմանն ուղղված ուղեցույցները և ալգորիթմային քարտերը կօգնեն ԱԱՊ օղակի բժիշկներին ունենալ հիվանդների բուժման միասնական մոտեցում», - նշել է ազգային ուղեցույցների համահեղինակ **Սամվել Հայրումյանը**:

Ուղեցույցների մշակման և վերապատրաստման դասընթացների կազմակերպման աշխատանքները համակարգում է ԱԱԻ-ն՝ ԱՀԿ-ի տեխնիկական աջակցությամբ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Քննարկվեց ավելացված արժեքի հարկի հարցը

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն Առողջապահության ազգային ինստիտուտում հանդիպել է հանրապետության բժշկական կենտրոնների ղեկավարների և ֆինանսական մասի պատասխանատուների հետ:

Հանդիպման նպատակն էր առողջապահության ոլորտում ԱԱՀ-ի կիրարկման և հնարավոր հետևանքների վերաբերյալ մասնագիտական քննարկումը:

Նախարարը կարևորել է նման ձևաչափով հանդիպումը: Նա նշել է.

«Բոլորս գիտենք, որ քննարկվող նախագիծն առավել խորը արմատներ ունի, որոնք ժամանակ առ ժամանակ հարցադրումներ են առաջ բերում, մասնավորապես՝ անհրաժեշտություն կա, արդյո՞ք, որ բժշկական ծառայություններն ազատված լինեն ավելացված արժեքի հարկից, արդյո՞ք դա նպատակահարմար և արդյունավետ է: Ուստի քննարկումները շատ կարևոր են՝ ձևավորելու ոլորտի դիրքորոշումը, ինչպես նաև հանդես գալու մեկ միասնական ճակատով»:

«Ճամփորդում եմ առանց COVID-19-ի» նախագիծը կընդլայնվի

Եվրասիական զարգացման բանկի «Թվային նախաձեռնությունների հիմնադրամը» նախատեսում է ընդլայնել **«Ճամփորդում եմ առանց COVID-19-ի»** հավելվածը՝ հաշվի առնելով ծրագրի վերաբերյալ դրական արձագանք ոչ միայն Ռուսաստանի, այլև այլ երկրների կառավարություններից: Մասնավորապես, առաջիկայում կստեղծվի ավգային սեգմենտ Ղազախստանի համար:

Բացի այդ, աշխատանքներ են տարվում նաև Տաջիկստանի հետ, նպատակ կա նախագիծը գործարկել Ուզբեկստանում ևս, ինչը հնարավորություն կտա ամբողջ Եվրասիական տարածաշրջանում հարմարավետ պայմաններ ստեղծել քաղաքացիների համար՝ կապված ավատ տեղաշարժի հետ:

COVID-19|ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ՆԵՐԿՐՎԵԼ Է ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ

Հայաստանի Հանրապետությունն է ներկրվել COVID-19-ի դեմ պատվաստանյութի՝ **COVAX FACILITY** նախաձեռնության միջոցով առաջին խմբաքանակը՝ **24 հազար դեղաչափ**:

Այն նախատեսված է ռիսկի խմբերի, մասնավորապես՝ բուժաշխատողների, 65 տարեկան և բարձր տարիքի անձանց, քրոնիկական հիվանդների, տարեցների խնամքի կենտրոնների բնակիչների և աշխատակիցների, սոցիալական խնամքի կենտրոնների աշխատակիցների, կամավորության սկզբունքով, կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստելու համար:

COVID-19-ի դեմ **AstraZeneca** ընկերության պատվաստանյութը ձեռք է բերվել **COVAX FACILITY** նախաձեռնության շրջանակներում: **AstraZeneca** պատվաստանյութն ունի ԱՀԿ-ի կողմից արտակարգ իրավիճակներում կիրառման թույլտվություն:

Պատվաստանյութը կիրառելի է 18 տարեկան և բարձր տարիքի անձանց համար:

Վերջին ժամանակաընթացքում հասարակության շրջանում առկա անտարբեր, անկգույշ և ոչ վգոն վարքագիծն իր ուղղակի ազդեցությունը թողեց կորոնավիրուսային վիճակագրության վրա: Գիտակցելով, որ առողջապահության ոլորտի ռեսուրսներն անսպառ չեն, յուրաքանչյուրիս պարտքն է բացառել համակարգի գերծանրաբեռնվածությունը:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՎԱՐԱԿՎԵԼՈՒՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՇՏԱՄՈՎ ՎԱՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ 10 ԴԵՊՔ

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի գիտաշխատողների և Հայ-Ռուսական համալսարանի կենսաինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի գիտաշխատողների կողմից իրականացվել են **COVID-19-ի ևս 12 ամբողջական գենոմի վերծանում՝ 3-րդ սերնդի սեկվենավորման կիրառմամբ:**

Նմուշները տրամադրվել են ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի կողմից, ս.թ. մարտի 18-ին:

Ի տարբերություն հունվար ամսվա հետազոտության, մարտին ստացված 12 նմուշներից 10-ում հայտնաբերվել է կորոնավիրուսի բրիտանական շտամը (B.1.1.7, VOC-202012/01):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի բացառվում տարբեր շտամներով վարակվելու հավանականությունը՝ Առողջապահության նախարարությունը ևս մեկ անգամ կոչ է անում խստորեն հետևել հակահամաճարակային կանոններին:

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

196044
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

869652
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

175401
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

3575
ՄԱՀԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

Ապրիլի 3-ի դրությամբ

4976 ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

1192 ՆՈՐ ԴԵՊՔ

856 ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

16150 ԲՈՒԺՎՈՂ ՊԱՑԻԵՆՏ

23 ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 060 83 83 00 -24/7

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան**, **Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**